

պատմական ճշմարտութեան և թէ մի գեղարուեստական երկից պահանջուող յատկութիւնների տեսակէտից:

Լ.

11) ՎԻՆՕԳՐԱԳՕՎ. Գասագիրք բնօրինակ պատմութեան, մասն III. Նոր Դար, բարգմանեց եւ Հայոց պատմութեան յաւելուածով ձօխացրեց Ն. Քարամեան. Խրատ. Առաջին Ծանուցանի. Բագու, 1900. 80. 379. գինը 1 ռուբլի:

Երևի պ. Քարամեանը իր այս թարգմանութեամբ միայն ցանկութիւն է ունեցել ապացուցանելու, թէ մեր աշխարհաբարը դեռ այնպիսի ողորմելի վիճակի մէջ է, որ չէ կարող ճիշտ արտայայտել վերացական գաղափարներն ու պարզ նկարագրել պատմական իրողութիւնները: Ուրիշ կերպ չեմ կարող բացատրել, թէ ինչն է ստիպել այդ «հայագիրտութեան սիւնին» տալ մի այսպիսի աշխատութիւն, որի ամեն մի էջը անընդհատ, բայց ապարդիւն ճիգ է լեզուի դժուարութիւնների դէմ մաքառելու, մինչև որ վերջապէս, պարոնը այն աստիճան խճճուած է, որ հայերէնի փոխարէն սկսում է թոթովել Բաբելոնեան աշտարակաշինութեան լեզուով:

Մոսկուայի համալսարանի պրոֆէսոր Վինօգրադովը, մի լուրջ գիտնական, 1895 թ. հրատարակել է մի դասագիրքը, որի երրորդ մասի թարգմանութիւնը տալիս է այժմ պ. Քարամեանը մեր միջնակարգ դպրոցների աշակերտների համար, «անձամբ փորձած լինելով թեկադրութեամբ տաժանելի դասաւանդութիւնը և սիրայօթար հրճուանօք փութալով կատարել Նորին Վեհափառութեան հրամանը մի դասագիրքը պատրաստելու պատմութեան համար»:

Ռուսերէն բնագիրը կարճ ժամանակամիջոցում երեք հրատարակութիւն է ունեցել, և եթէ մամուլն էլ, մանկավարժական աշխարհն էլ համակրութեամբ էին ողջունում նրա երեւան գալը, պատճառն այն էր, որ հեղինակը, հետեւելով այժմեան պատմական գիտութեան պահանջներին, իր ձեռնարկի մէջ առաջին տեղն է յատկացրել ժողովուրդների ներքին կեանքի, այսինքն—կրօնական, մտաւոր, հասարակական ու տնտեսական յարաբերութիւնների զարգացման պատկերին, իսկ թագաւորական տների ու ազգերի անվերջ խռովութիւնների ու կռիւների մասին այնքան է խօսում, որքան անհրաժեշտ է քաղաքակիրթ մարդկութեան առաջընթացութեան մասին ամփոփ գաղափար տալու համար: Մասնաւորապէս Վինօգրադովի «Նոր Դար» հատորի այն ասկասկած առաւելութիւնն էին չեչ-

տում, որ այստեղ առաջին անգամ արժանաւայել ուշադրութիւն է դարձուած այն մեծ շարժումների վրայ, որոնք վերաստեղծեցին կրթութեամբ մարդու կեանքը 18-րդ և 19-րդ դարերում և ներկայիս տիրապետող պայմանների անմիջական պատճառներն են կազմում. այս տեսակէտով Վինոգրադովի դասագիրքը անհամեմատ բարձր է, օրինակ, Իլովայսկու դասագրքից, որի մէջ վերջին երկու դարերի դէպքերը մէջ են բերուած սղմուած, համառոտակի կերպով, շատ անգամ սխալ և գունաւորուած լուսարանութեամբ: Մի խոշոր պակասութիւն սակայն նսեմացնում է Վինոգրադովի ձեռնարկի նշանակութիւնը, գոնէ աշակերտական գործածութեան համար: Ոճը, զուտ գիտնական լինելով, շատ ծանր է, կազմուած երկար ու բարդ նախադասութիւններից, անկենդան, զուրկ ամեն գեղարուեստական արժանաւորութիւններից: Աշակերտը ստիպուած է ուշադրութեան ամբողջ ոյժը լարելու՝ հեղինակի մտքին հետեւելու համար: Այս կողմից աւելի քան գոհացուցիչ պէտք է համարել մի ուրիշ ուսուերէն դասագիրք, որ, պահպանելով գիտնական շարադրութեան բոլոր յատկութիւնները, գրուած է աշակերտներին լիովին մատչելի լեզուով. մեր խօսքը Պետերբուրգի պրոֆէսոր Կարէեւի աշխատութեան մասին է, որի 3-րդ հատորը—Նոր Դարը լոյս է տեսել դեռ անցեալ տարի, իսկ 1-ինը և 2-րդը լոյս են տեսնելու հետզհետէ: Սխալուած չենք լինիլ, եթէ գուշակելու լինենք, որ Վինոգրադովի գրքի նշանակութիւնը, իբրեւ դպրոցական ձեռնարկի, ընկնելու է ընդհանուր պատմութեան այս նոր ձեռնարկի հրատարակուելովը:

Ընդհանուր պատմութեան ինչ դասագիրք էլ որ թարգմանուէր մեր միջնակարգ դպրոցների համար, մեր ուսուցիչներից ու աշակերտներից պէտք է ընդունուէր ամենայն շնորհակալութեամբ, էլ չենք ասում այնպիսի աչքի ընկնող ձեռնարկի թարգմանութեան մասին, ինչպէսն է Վինոգրադովինը: Ի՞նչ ունենք այդ առարկայի դասաւանդութեան համար—պ. Արասխանեանի «Արեւելեան ազգերի պատմութիւնը», որ կազմած է ըստ Մասպերոյի և մի շատ սահմանափակ պատմական չրջան է ընդգրկում, պ. Հայր. Ղուկասեանի «Հին դարերի» և Գէորգ Սուրէնեանի «Հին և Միջին դարերի» թարգմանական ձեռնարկները, որոնք թէ հնացած են և թէ այնպիսի թերութիւններ են պարունակում, որ դասատուն ստիպուած է շարունակ սրբագրել ու լրացնել: Նոր դարերի համար՝ ո՛չ մի դասագիրք չունէինք: Հասկանալի է թէ ինչո՞ւ պատմութեան ուսուցիչները անհամբերութեամբ էին սպասում պ. Փարամեանի թարգմանութեան լոյս տեսնելուն, հաւատացած լինելով, որ այդ աշ-

խատութիւնը որքան էլ թերի լինէր, այնու ամենայնիւ շատ կ'օգնէր դատաւարութեան միջոցին: Սակայն ծանօթանալով թարգմանութեան հետ՝ ամեն մէկը համոզուում է, որ հին անօգնական դրութիւնը մնում է անփոփոխ: Իր թարգմանութեամբ պ. Քարամանը ապացուցեց, որ նա ոչ ուսուցէն լեզուին է տիրապետում, ոչ էլ հայերէնը այնքան գիտէ, որ օգտուի ճիշտ ձևերի ճոխ բաղմատեսակութիւնից» (Ներածութիւն):

Բերենը մի քանի օրինակ, գաղափար տալու համար, թէ որքան է գիտութիւնը ուսուցէնի բառական հարստութիւնից.

Распоряжаться полицией—ստրկանութեան մասին կարգադրութիւն անել, перевозить—վերադրուցանել, цинический—մի տեղ՝ անամօթ (Դիզրաէլի), մի ուրիշ տեղ՝ չնական, результат развития—զարգացման եզրակացութիւն, устроили прения—սահմանեց վիճարանութիւն, кооперативный дух—միաբանութեան ոգի, капитальное приобретение—հիմնական գրաւում, рассудочность—մի տեղ՝ պատճառասիրութիւն, մի ուրիշ տեղ՝ բանադատութիւն, означеновать—տօնել, круто—շանկարձակի, натуральное хозяйство—բնական տնտեսութիւն, ссылка на авторитет папы—պապական հեղինակութեան վկայութեան կոչումներ:

Մի կողմ թողնելով ուսական ստուգարանութիւնից բայերի ժամանակների շփոթութիւններ (անցեալ կատարեալը անցեալ անկատարի հետ, ինչպէս—составлялись—կազմուեցան, духовенство бралось—հոգևորականութիւնը ձեռնարկեց, осудить—զատապարտում էր և այլն) մենք առաջ բերենք՝

Սխալ հասկացուած համաձայնական կապակցութիւնների մի քանի օրինակներ.

Пользоваться полною самостоятельностью въ устройствѣ и веденіи своихъ особыхъ дѣлъ—վայելի կատարեալ ինքնուրոյնութիւն ներքին կազմակերպութեան և իւր յատուկ գործերի վարչութեան մէջ, изучали природу, изучали древніе образцы искусства—ուսումնասիրում էին բնութեան և գեղարուեստի հնագոյն օրինակները, контроль и высшее направление дѣлъ—գործերի վերստուգութեան և նրանց բարձրագոյն ուղղութիւն տալը:

Միւս կողմից ամեն քայլափոխում ուսարանութիւն. преобладаніемъ обязана—գերակշռութեամբ պարտական է. ближе всего касались священнаго союза германскія дѣла—սրբազան դաշնադրութեան ամենից աւելի մերձաւոր էին գերմա-

նական գործերը, *общая воинская повинность*—ընդհանուր զինուորական պարտականություն (ասել է՝ զինուորագրություն):

Այսպիսի թարգմանությունների կողքին պատահում են հայերէն բառերի հետեւալ շարահիւսություններ.

Գործուած վարպետներ հրապուրել—*привлекать опытных мастеров*. անգլիացոց բանակը ճահիճը խոթել—*загнать англійскій лагерь въ болота*. կռիւները դիպչում էին եւրոպական զաղութներին, ոչ մի գործունէությունն նախագիծ—*никакая программа действий*. այսպիսի միջոցի ձեռնարկությունից յետոյ—*въ виду такой смѣлой мѣры*. անցքը միջին դարուց դէպի նոր ժամանակը առանձնապէս հիւանդագլին ձևով տեղի ունեցաւ—*переходъ отъ среднихъ вѣковъ къ новому времени особенно болѣзненно совершалось*. առանձին զորաւոր կերպիւ—*особенно сильно*. անհրաժեշտ էր համաձայնությունը. լուրջ լուրը արագաթուիչ կերպով տարածուեց. ջնջուեցան առանց հատուցման գնի բոլոր հարկերի տեսակները—*уничтожены безъ выкупа все виды феодальныхъ повинностей*: Կամ սեռականի յետադաս գործածութիւն, օրինակ—զգալ անգամ մի գերմանական ազգի, մնաց հոգեւոր առաջնորդ Ժընեպի: Յարաբերական դեմաճուցի պայտօրեակ գործածութիւն—*թագաւորն ատում էր կալուինականներին, իբրև տէրութեան և եկեղեցու հակառակորդներին, որ իւր գահի նեցուկն էր համարում*—*какъ противниковъ государственной церкви, которую онъ считалъ опорой своего престола*.

Այս բնագործիկ դարձուածները համեմուած են չինծու, երբեմն էլ ինքնահնար, բայց անճաշակ բառերով. *возрождение искусств*—գեղարուեստների վերածնունդ. *идеаль*—գերակայ. *фигурализиралъ*—преобразовать, *հրազինուոր*—вооруженный *огнестрѣльнымъ оружіемъ*. *սուսերազինուոր*—вооруженный *холоднымъ оружіемъ*.

Պ. Քարամանի լեզուագիտական ստեղծագործութեան հանձարը երևում է մանաւանդ համազգային տերմին դարձած գիտական բառերի հալացման մէջ, որի վրայ «առանձին զորաւոր կերպիւ» ճիշդ է թափած.

Прагматическая санкція—«իրաւագիտական կարգադրութեան պատճառական սրբագործում», *олигархія* սուղիշխանություն. *сеймъ*—աւագաժողով, համաժողով, *реакція* и *либерализмъ*—յետաշրջում և ազատականություն. *реформація*—բարեշրջում, բարենորոգություն. *ре-*

форма—նոյնպէս բարենորոգութիւն. парламент—խորհրդարան. реставрація—վերահաստատում. интендантъ—գործակալ կամ վերակացու. меркантилизм—վաճառականականութիւն. протекціонализм—խնամակալականութիւն. конгресс—ընդհանուր ժողով. конвенція—համագումար. сенберія—տանուտէրութիւն. деизм—աստուածեանց աղանդ. муниципалитет—քաղաքատեսչութիւն. конвент—համախումբ ժողով. ուրիշ տեղ՝ սահմանադիր, մի տեղ էլ համագումար ժողով. директорія—վարչարան. бюрократическій—պաշտօնէական, շրջանակալական:

Երբեմն յայտնի տերմինները չը հասկանալով, գաղափարները խառնում է: Օրինակ.

Ջրաբաշխական մեքենայ—гидравлическая машина, որը ջուր երբէք չէ բաշխում, այլ ջրի ոյժով է գործում. վարձակալ երկրագործ—фермеръ (իրանդիպում), որ ոչ թէ վարձ էր ստանում, այլ ինքը վճարում էր իր մշակած հողի փոխարէն հողատիրոջը: Մարդօգուտ գիտութիւն—гуманизм, որ երբէք չէր ձգտում օգուտ բերելու մարդուն. յեղափոխական հաւատաքննիչներ—революціонеры инквизиторы, որոնք հաւատի հետ ոչ մի գործ չեն ունեցել, այլ հալածել են միայն քաղաքական հակառակ գաղափարները:

Անհատ թշնամութիւն հրատարակելով օտար բառերի դէմ, պ. Գարամբանը երբեմն ստիպուած է լինում գոնէ փակագծերի մէջ բերելու տերմինների օտար ձևը, բայց, անհասկանալի ֆրանսասիրութեամբ, վերցնում է դրանց ոչ թէ սկզբնական, տեղական արտասանութիւնը, ինչպէս ամեն տեղ ընդունուած է, այլ ֆրանսերէն տերմինները—տերրէօր, конкордате—կոնկորդա, интендантъ—էնտէնդան, контрибуція—կոնտրիբյուսիօն (որ սխալ թարգմանում է փրկանք): Եւ միամտաբար կարծելով թէ ֆրանսերէնի մէջ էլ ուսական измъ վերջաւորութիւնը իզմ է (մինչդեռ isme—իսմ), գրում է. օրինակ. сенсуализм—սանսիւլալիզմ, материализм—մատերիալիզմ, меркантилизм—մերկանտելիզմ:

Բայց պարոնը ոչ պակաս գրաբարամու է. ամեն տողում մի-մի գրաբար բառ, կամ գոնէ գրաբար ձև, ինչպէս. Մեր դարու սկզբան, մետասանամեայ, հարկաւ, յիրաւի, յառաջ բերին, ամենուրեք, համակարգեալ, ոգևորեալ, արտօնաւորեալ, առաքեալ—առաքելոյ, քահանայք—քահանայից, երից դասակարգերի համաժողով, հնարաւոր կացոյց:

Եւ սրանց կողքին. Սկսաւ, դրաւ, արաւ, բերաւ, առնուեցաւ, կազմուում, ձայնտուութիւն:

Հասկանալի է, որ այսպիսի լեզուագիտական գոհարներով զարդարուած թորգմանութիւնը մի շարք անհեթեթութիւններ պիտի ներկայացնէ աշակերտներին, որոնց առանց այն էլ խեղճուկ հայերէնը միայն կարող է աւելի ևս խառնաշփոթուել, օրինակ, այս տեսակ հատուածներէից.

Եթէ միապետական իշխանութիւնը երկար գործեց Ֆրանսիայում միահեծանութեամբ և առանց վերահսկողութեան, դրա համար և այժմ ժլատաբար էին չափում իրաւունքն և հնարաւորութեան չափ քիչ ազդեցութիւն էին յատկացնում նրան (226):

Յարմար դիպուածում քաղաքացոյ իշխանութիւններին ընդդիմանալու իրաւունքը դժուար էր սահմանադրութեան մէջ որոշել մանրամասնօրէն, բայց իրաւունքների յայտարարութեան մէջ դրա ձևական ճանաչումը զուրկ էր նշանակութիւնից, աչքի առաջ ունենալով այն սպառնական դիրքը, որ բռնել էր Փարիզը, և յուզուած վիճակը տաք գլուխներ, որոնք բազմաթիւ էին Ֆրանսիայում (230).

Բայց ո՞ր մէկ օրինակը բերենք—անչափ բազմաթիւ են այսպիսի հատուածները:

Իսկ հայոց պատմութիւնից պ. Քարամեանը բերում է $51\frac{1}{2}$ երես վայրիվերոյ տեղեկութիւններ, որոնք յամենայն դէպս հեռու են «ճոխութիւններ» լինելուց... Ուրեմն, պ. Քարամեանի թարգմանութիւնը այնքան թերի է և դժուարամարս, որ անկարող է լրացնել պատմութեան դասագրքի այն մեծ պակասը, որ զգացւում էր մեր մէջ:

ՍՏ. ԼԻՍ.

12) ԼԷՅՕ. Հայկական «պագրութիւն: Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում: Հատոր առաջին, XVI—XVIII դար, Արտատպած «Մշակ» լրագրից: Թիֆլիս, 1901. եր. XVI+451, գինն է 1 ռ. 50 կ.:

Անցեալ 1900 թ. յունիսի 11-ին Գերմանիայի Մայնց քաղաքում տօնուեց Յոհան Գուտէնբէրգի ծննդեան 500-ամեայ յորեկանը: Գուտէնբէրգը մարդկութեան առաջնակարգ բարերարներէից մէկն է—տպագրութեան հնարողը, ուստի և բոլոր քաղաքակիրթ ազգերը, որոնք վայելել են և վայելում են տպագրութեան պտուղները՝ մասնակից եղան այդ հաղուագիւտ յորեկանի տօնին: Մենք, հայերս, անմասն չենք մնացել տպագրութեան բարիքներից. բայց նրա հնարողի յորեկանին մասնակցելու, մեր երախտագիտութիւնը արտայայտելու նկատմամբ